


ԱՐՏԻ ԽՕՍՔ

Posted on May 24, 2010 by Keghart



Category: [Opinions](#)



Պարոյր Աղպաշեան, Լիբանանի Խմբագիրներու սենտիքայի վարչական գերագոյն խորհուրդի անդամ, Պէյրուզ, 24 Մայիս 2010

Անադմուկ Մեկնումը Լիբանանեան Մամուլի Նահապետ՝ Մըլիեմ Քարամին

Մըլիեմ Քարամ...

Անուն մը, որ ամբողջովին կը բուրբ արաբականութիւն, լիբանանցիութիւն, բայց մանաւանդ՝ հրապարակագրութիւն, խմբագրապետութիւն, իսկ աւելին՝ հրատարակչականութիւն, լրագրականութիւն:

Շուրջ հինգ տասնամեակ (ուղիղ 49 տարի), Մըլիեմ Քարամ մնաց պատնէշի վրայ, որպէս արժանաւոր նախագահը Խմբագիրներու սենտիքային, այս իւրայատուկ կառոյցը դարձնելով լրագրողներու մեղուափեթակ մը:

Պարոյր Աղպաշեան, Լիբանանի Խմբագիրներու սենտիքայի վարչական գերագոյն խորհուրդի անդամ, Պէյրուզ, 24 Մայիս 2010

Անադմուկ Մեկնումը Լիբանանեան Մամուլի Նահապետ՝ Մըլիեմ Քարամին

Մըլիեմ Քարամ...

Անուն մը, որ ամբողջովին կը բուրբ արաբականութիւն, լիբանանցիութիւն, բայց մանաւանդ՝ հրապարակագրութիւն, խմբագրապետութիւն, իսկ աւելին՝ հրատարակչականութիւն, լրագրականութիւն:

Շուրջ հինգ տասնամեակ (ուղիղ 49 տարի), Մըլիեմ Քարամ մնաց պատնէշի վրայ, որպէս արժանաւոր նախագահը Խմբագիրներու սենտիքային, այս իւրայատուկ կառոյցը դարձնելով լրագրողներու մեղուափեթակ մը:

Դարձաւ ոչ միայն լիբանանեան իրականութենէն ներս կարկառուն ներկայութիւն մը, այլեւ՝ արաբական աշխարհին ու միջազգային կեանքին մէջ փայլուն հեղինակութիւն մը, որուն նկատմամբ կար թէ՛ խոր յարգանք, թէ՛ անկեղծ հիացմունք, միանգամայն: Իր քաղաքական այցելութիւններով, մեկնաբանութիւններով, յարաբերութիւններով, դիրքորոշումներով ու վերլուծումներով, եղաւ հաւասարակշռեալ, չափաւորական եւ անկողմնակալ, յատկութիւններ, որոնք քիչերուն շնորհուած են, ի մասնաւորի Լիբանանի նման համայնքային բարդ ու խճճուած դրուածք ունեցող երկրի մը մէջ:

Քարամ, իր հանգամանքով ու մամլոյ ցանցով, չհակադրուեցաւ որեւէ կողմի, չծառայեց որեւէ կողմի, չկողմնորոշուեցաւ որեւէ կողմի, իսկ այդ բոլորը ըրաւ գիտակցուած ձեւով, հաւատալով որ միութեան, մէկութեան ու միասնականութեան գործօնները անփոխարինելի են Լիբանանի յարատեւութեան համար:

Յաջողեցաւ իր այդ ընտրանքին մէջ, ապացոյցը տալով Լիբանանին իր նուիրուածութեան, ծառայասիրութեան ու պաշտասիրութեան:

Իր առաջնորդողներն ու խմբագրականները փնտռուած էին, արաբ թէ օտար ընթերցողներէ, որովհետեւ նեղ չափանիշներով չէր կշռադատեր տեղական, շրջանային ու միջազգային իրադարձութիւնները, այլ ՝ լայն կարկինով, առարկայական տուեալներով, իրապաշտ մօտեցումներով ու պատկերաւոր օրինակներով:

Քարամ այն բացառիկ անձնաւորութիւններէն էր, որ իր պաշտօնակիցներուն ու գրչեղբայրներուն նկատմամբ ունէր հոգատար վերաբերմունք, կը տածէր անհուն սէր, կը պաշտպանէր անոնց իրաւունքները, կը գործէր անշեղ պարկեշտութեամբ, ուրախ թէ տխուր առիթներով, լաւ թէ վատ օրերուն:

Հայութեան նկատմամբ իր զգացումները անսահմանօրէն ջերմ էին, կապերը ՝ ամրապինդ, գործակցութիւնները ՝ արդիւնաւետ:

Կը յարգէր իր հայ պաշտօնակիցները, կը փնտռէր անոնց ընկերութիւնը, կը հետաքրքրուէր անոնց ասպարեզով, կը գնահատէր անոնց աշխատանքը, կը գոհացնէր անոնց պահանջքները, հոն ուր կարիքը կը զգացուէր կամ անհրաժեշտութիւն կը տեսնուէր:

Լիբանանահայութիւնը իրեն համար համահաւասար համաքաղաքացի էր, արժեւորելով անոր կառուցողական դերակատարութիւնը լիբանանեան կեանքին մէջ, ինքզինք շրջապատուած զգալով անկեղծ հայորդիներով:

Յաճախ կը հետաքրքրուէր լիբանանահայ մամուլի գործընթացով, հայ խմբագիրներու ու լրագրողներու վիճակով, անձնապէս հետս հեռաձայնային կապ հաստատելով կամ իր քովը հրաւիրելով, ուշի-ուշով լսելով, ապա տալով իր խորհուրդներն կամ թելադրութիւնները, երբեմն ալ ՝ հեղինակաւոր խօսքը:

Ոչ միայն անտարբեր չէր, այլեւ գործնապէս ու լրջօրէն զօրավիզ էր Հայկական Հարցին ՝ Հայոց Ցեղասպանութեան ընդունման ու ճանաչման, իր մամուլը լայնօրէն բանալով այս մասին:

Կորուստը ծանր է, մեկնումը ՝ անժամանակ, յատկապէս այս հանգրուանին, երբ Լիբանանը պետք ունէր իր խօսքին ու գրիչին:

Բիւր յարգանք իր վաստակին եւ յիշատակին:

